այս քիոյ կըմքը մինց ան քառա մը ելուս մոտ մին
զամանակա մատայան զըմքը զուսիք զուսիք կըմքը
հայոց ԱՇԽԱՑ Հայուսանի լրագիրի 1876 ամի 30 հա-
մարումը հրատարակուեցաւ հետեւեալ յօդուածը:
«Ըստ Օтечествա (Որդի Հայունեաց) 1876 ամի 165
համարումը կարգացնիք մէկ յօդուած, որ գրած է
այն հեռագրալուրի առթիւ, ուր յիշվում է, թէ
Յայները և Հայերը Տաճկատանումը բարեկամեն Տա-
ճիկներին և Նրանցից էլ գտնուել են անձինք, որոնք
կամաւոր զինուոր են գրվել Տաճկական գորքերի մէջ.
«Այդ հեռագրալուրը առիթ էր տուել վերո-
յիշեալ լրագրի խմբագիր ող. Աւսպենսկուն այնպիսի
լեզու բանեցնելու հայերի դէմ, որ անվայել է և մի
կոյր, մոլիսանդ և տգէտ անձին. Նա չէ վրդովվել
մինչեւ անգամ սովորաբար սինլքորի բերանում պտը-
տող առլեռշնուր խօսքն արտասանելու, որ բաւական

մեծ պատիւ է մի շատ տարածուած լըազրի խմբագրի արժանաւորութեանը, որ չէ ցանկացել բարձրանալ սինլքորից բարձր իւր խօսակցութեան ձևերի մէջ:

«Մենք այդ մասին հարկաւոր չենք համարում նրան որևէիցէ խօսք ասելու, վասն զի ամեն մարդ իւր ճաշակն ունի: Մեզ զարմացնում է միայն պ. Ուսպենսկու հայեացքն, որ բնաւ չէ յարմար ոչ մի հասկացող անձնի, ևս առաւել մի խմբագրի: Նորա զայրոյթի և անալգամկան ձևով Հայերի վրա խօսելուն առիթ են առեւ մի քանի Հայեր, որոնք ցոյց տալով արդեօք իրանց հպատակական հաւատարմութենը, թէ առանձնական հաշեներից դրդած, զինուորազրվել են Տաճկական բանակի մէջ: Արդեօք այդ ի՞նչ յանցանք է Հայի համար. մի՛թէ հաւատարմութիւնը կարող է արատ համարուիլ հպատակի համար: Թողնելով մի կողմ, որ Հայերն աւետարանական ազգ լինելով, միշել են միշտ առաքելոց խոսքերն, թէ «ծառայք» հնազանդ լիբուք տէրանց ձեւոց մարմնաւորաց», և համաձայն գորան վարլիլ են ամենայն տէրութեանց մէջ, որոնց նորա բազզի բերմանը հպատակ են եղել, իրանց հաւատարմութեամբ օրինակելի են եղել այլոց, գառնում ենք զէպի պ. Ուսպենսկին և հարցնում ենք՝ արդեօք ունի՞նա որ և է հասկացողութիւն մարդուս քաղաքական պարտաւորութեանց վրա: Հասկանում է արդեօք, որ

ամեն ոք, առանց զանազանութեան: կրօնի և աղջ գութեան, ունի պարտականութիւն զէպի այն տէր բութիւնը, որոյ անդամ է նա քաղաքապէս: Երեւ ում է, որ Ծափ Օտեշտվա լըազրի պ. խմբագրը լինելով աւելի բազբաւոր քան որեւէ Հայ, չէ եղել հպատակ օտար տէրութեան և ծնվել է ու մնվել ու մեռնելու է հպատակ միայն իւր հայրենեաց: բայց այնպէս չէ Հայ ազդի վիճակը որոյ մասերը զանազան տէրութեանց հպատակ են և իրրեւ այս պիսիք նոցանից իւրաքանչեւըն ունի իւր քաղաքական հայրենիքն և պարտականութիւնքը զէպի նա: Մի՛թէ չգիտէ պ. խմբագրը, որ այսօր Ոնւսաւտանի մէջ ևս կան Հայեր, որոնք իրանց հաւատարմութեամբ արժանի են եղել նորա կայսրների համակրութեան և բարեհաջութեան, որոնք թափել ու թափում են շատ արիւն Արուսաստանի: իրանց քաղաքական հայրենեաց՝ համար, և այն օրինակեր լի քաջութեամբ: Քաջութեամբ ենք ասում, որովհ հետեւ, ըստ ասութեան պ. Աւսպենսկու աշխարհիս ամենից երկշուն և անարի Հայ ազգըն, տուել է Արուսաստանին այնպիսի անձնաւորութիւնք, որոնք զարդարում են նորա վերջին ժամանակների պատմութեան երեսները իրանց անուններով: Հրաւիրում ենք պ. Ուսպենսկուն ուսւմնասիրելու իւր հայրենեաց պատմութիւնը այնպէս: ինչպէս կ'վայել Հայ:

բենեաց Որդուն», որ կարողանաց տեսնել, թէ նուս
սաստանն ունեցել է և առնիւ այդ անարի, Հայ ազ
գից շատ և շատ աւելիք քաջ և արժանաւոր հայ-
րենեաց որդիք, քան պ. Աւսպենսկին:

«Ի՞նչպէս է կարծում պ. Աւսպենսկին, մի՞թէ
պէտք է Թարսիկներն և Տաճիկներն ամենայն անար-
գական խօսքերով պատուէին Հայերին և Կովկասեան
մահմէդականներին, որոնք Խրիսի պատերազմի ժա-
մանակ կազմելով ամբողջ գնդեր, կատարում էին ի-
րանց քաղաքական պարտականութիւնքը Ասիսկան
Տաճկաստանում, պատերազմելով ուսաց զօրաց հետ
միասին սոցա թշնամեաց դէմ, թէ իրու համարակ
զինուորներ, թէ իրմւ սպաներ և թէ իրու բարձր
աստիճան զինուորականներ նոյն իսկ Աւուսաց կանո-
նաւոր զօրաց մէջ; Այս պատերազմում անալի Հա-
յոց քաջութիւնը, երևեցաւ, թէ պ. Աւսպենսկունը,
որ իւր հայրենեաց ճգնաժամի ժամանակ գուցէ հատած
էր իւր տաք և ամեն յարմարութիւն ունեցող ա-
պահով սենեակում էր կեզուագարութիւնը շնորհք չէ,
ինչպէս և մի ամբողջ ազգ անարդելն ոչ խելօրու-
թիւն է և ոչ էլ ազնուութիւն, վասն զի այդ ազգն
անշուշտ կունենայ իւր մէջ այնպիսի անհամար,
որոնք ամենայն բարեմասնութիւնի շատ և շատ գե-
րազանց են պ. Աւսպենսկու նմաններից և կարող են
նրանց պատկառելի լինիլ:

Այս Այս քանս և շատ համարելով պ. Աւսպենսկու
համար, խօսքը վերջացնում է Մեղրուն Հայաստանին,
մեր կողմից ստիպվում ենք ցաւակցութիւն յայտնե-
լու, որ Աւուս խմբագիրների շարքումը ներկայումն
գեռ ևս կարողանում են գտնուիլ պ. Աւսպենսկու
նման անձինք, իրանց վայրենի համոզմունքներով և
խակ գառողութիւններով։

Այս յօդուածը ևս թարգմանեցի փոռութեալու-
և ապագիբլուի «Կայուն» լրագրի 1876 ամի 125 հա-
մարումը, յաւելացրի հետևեալ գառողութիւնը և
պատմական տեղեկութիւնքը, աշխատելով լքցնել
որքան կարելին էր, այն գատարկ տեղերը որ թողել
էր հայ լրագիրը, տիկներեալ յօդուածի կարձութեան
համար։ զայտ դայմարայ լմասաւուս մինաւ արք պի-
աւաւաւ Մէկ ապգի վրայ գառողութիւնն անելց հա-
մար հարկաւոր է, գոնէ հարկաւանցօրէն, ծանօթ լի-
նիլ նրա պատմութեանը, և եթէ այդ պայմանը
անշուշտ հարկաւոր է ամեն մէկ դատողի համար,
ուրեմն աւելի անսահմանքի է, նա խմբագրի համար,
որի միջումը նրա լրագրի ընթելցողները իրաւունք
ունին ենթագատել բազմակողմանի գիտութիւն այն
առարկայի, որ նա ենթարկել է իրա քննողութեանը։
Բայց հայ լրագրի ցցց առած յօդուածը Ըմբ Օ-
տեռետա լրագրի, մերկանուամ է կանգնեցնում նրա
խմբագրին և ապացուցանում է, թէ նա բոլորովին

չգիտէ պատմութիւնը հայոց ազգի, որին նա բարեհածել է ճանաչել աշխարհին Երեսին աւելից առելի Երևան
և առաջի առգ, և բաց յայդմանէ բարեհածել է մականուաննել նրան պամկական բառիւս «արմեաշկա»:

Եթէ Սահե Օтечествա լրագրի խմբագիրը պարաւորութիւն չէ համարել իրան համար ուսումնաւսիրել կամ գոնէ հարևանցօրէն ծանօթանալ հայոց ազգի պատմութեանը, որ զանազան ժամանակներումը տպագրած է ոռւս և ուրիշ եւրոպական լեզուօք, ապա ուրեմն իրաւունք էլ չ'ունէր իրան անձանօթազգի վրա խօսել այդպիսի խակ և անվայնել կերպիւ: Փոքր ՚ի շատէ լուսաւորեալ մարդը, որ շրջագայում է քաղաքակիրթ հասարակութեան միջումը, չի ների իրա անձին արտասաննել այդպիսի խօսք արմեաշն, որ մենք սովորաբար լսում ենք գիւղական պառաւկնանիքից և ռամիկներից: Նշանակում է, թէ նա, իրա խմբագրական ծայրահեղ բոցավառութեան միջումը, չէ կարողացել զսպել իրա լեզուն իրա խօսակցութեան սովորական ձեւից և բոլորովին մոռացել է, թէ դրում է ապագրութեան համար: Իսկ եթէ նա անուանում է հայերին աշխարհին վըրայ ամենից առելի վախչոր առգ միայն այն պատմառաւ, որ պատմութիւն չգիտէ, ապա ուրեմն մենք ստիպուած ենք ցոյց տալ նրան բովանդակ շարք աշխարհահռչակ անցքերի, որք յայտնի են բոլոր լուսաւորեալ մարդկութեանը,

ուր հայերը ապացուցել են իրանց տղամարդութիւնը, անվեհերութիւնը և քաջութիւնը: Կամ և առաջ ցոյց տանք պ. Ուսպենսկուն էն հայազգի զօրապետների վրա, որոնք պատերազմների միջումը ցոյց տուած քաջութեան և գերազանցութեան պատճառաւ, արժանաւոր են դատուել բազմելց բիւզանդից գահի վրա, որպիսիք են՝ Կայսր Մատթիկիոս 582 թուականին, Կայսր Լեվ (Լէոն) V 813 թ, Կայսր Վասիլ Արշակունի 867 թ, Լեվ Փիլիսոփայ 886 ի, Կոնստանդիանոս Պորֆիրածին 911—919 թ, Ռոմանոս Վաշթենեան 949 թ, Ռոմանոս որդին Պորֆիրածնի 959 թ, Յովհաննէս Զմշկիկ 969 թ, Վասիլ II և Կոստանդիանոս 976—1025 թուականին:

Երեւելի պատմաբան Գլինկա իրա «Տէսութեան Պատմութեան» Հայոց առգից անուանեալ դիքումը, որ սպած է 1833 թուականին, այսպէս է ասում:

Երես 129. «Ներկայացաւ հայազգի Արզաման իրա գորքով, շտապաւ գնաց Վերոնի պարապի մօտ, առ և երկիւղ սփուեց առաջնակարգ զօրաց միջումը (541 և 542 թ.)»

Երես 150. «Բասարդուս, հայ կալուածառէր, աիրապետող Լոկանից և լայնատարած քանակութեան երկրի, իրա յարձակմունքներով զղուեցնում էր Կայսերութիւնը (872 թ.)»

Երես 163. «Բողպարաց դէմ սկսած պատերազմի միջումը անկաւ հայազգի Անդուրինէսը, որ գերազանցվում էր յունաց զօրքերի միջումը իրա վիթխարի հասակաւ և քաջութեամբ» (892 թ.)»

Երես 165. «Հայազգի Ազոտը քաջութեամբ խմբաւորվեցաւ Սարացինաց դէմ» (914 թ.)»

Երես 166. «Հայազգի Կուրփուսաւ, որին յցնք անուանում էին (Արմանեալ Վելիսարի) հայոց Բելիսար, քաջութեամբ կոռորում էր Սարացիններին, քաղաքներ էր առնում, և ազատեց Հայաստանը» (927 թ.)»

Երես 166. «Կայար Ոթման Լակաբենը էր որդի հայազգի գինուորականի Յէսիֆիլակտոսի, որ աղատեց Կայսր Վասիլի կեանքը» (944 թ.)»

Յետոյ դառնանք դէպի ամենախորին հնութիւնը, ուր հայերը կանգնած պատմութեան միջումը յայտնի և երեկով ազգաց կարգումը և ունենալով իրանց սեպհական թագաւորութիւն, համարեած թէ անգագար պատերազմում էին Բաբելոնացւոց, Ասորեստանեայց, Մարաց, Նգիպտացւոց, Պարսից, Յունաց, Մակեդոնացւոց և Հռոմայեցւոց հետ; Ակներև է, որ եթէ մի ազգ, շըջապատած ամեն կողմերից թշնամի ազգերով և ասպատակով բռնականերով, կարողացաւ պահպանել իրս անկախութիւնը և թագաւորութիւնը, սկսած 2210 թուականից Քրիստոսի ծնունդից առաջ մինչև 1375 թուականը

Քրիստոսի ծնունդից յետոյ շարունակ 3485 տարի, ուրիմն կարծիք չկայ, որ նա ուրիշ կերպիւ չեր կարագայդ անել, եթէ ոչ վէճքը ձեռքումը և քաջութիւնը սպառամբ անենալով, և եթէ կրթեմն յաղթվում էր և ընկնում էր օտար ակրութեան ներքոյ, բոլոր լուսաւորեալ մարդկութեանը յայտնի է, որ այդ չարիքը հանում էին նրան ոչ թէ տղամարդութեան, անթէ բրութեան և քաջութեան պակասութիւններից, այլ յատկապէս այն պատճառաւ, որ ոչ մէկ կողմից օգնութիւն չ'ունէր և իրա զօրքը շատ սակաւ էին, քնն թէ նրա վրա յարձակուող ազգերի զօրքերը: Ոչ մէկ պատերազմը չէ սկսուել Հայաստանումը այնպէս, որ երկու պատերազմող կողմերի զօրութիւնը եղած ընկը հմւասարաջափ, այլ ընդհակառակն, բոլոր յարձակունքը հայաստանի վրա միշտ եղել են միւնցին ժամանսակումը երկու, երեք և աւելի ազգերի կողմից միասին: Սակայն այնու ամենայնիւ հայերը միշտ պատերազմել են մինչև վերջին կարելութիւնը անվեհերոտութեամբ և աղամալպութեամբ:

Ամբողջ երեսուն և հինգ դարերի ընթացքումը հայերը անմահացրին իրանց անունը շատ պատերազմնելումը՝

Տասն տարի (1740—1730 թ., Ք. Ֆ. առաջ) Կրանք վարեցին արիւածակագլուխ պատերազմ նամիրամի հետ:

Պարսից թագաւորը, գործակից լինելով Սարշանապալի գահընկեցութեանը 748 թ., վերականգնեց Հայաստանի անկախութիւնը:

Թագաւոր Տիգրան Ա. Կիւրոսից գաշնակիցը (565 թ.) գործակից էր Նրան Պարսից բոլոր արշաւանքներումը և պատերազմներումը: Արտաշես թագաւոր աղատեց Հայաստանը Ասորեստանեաց Ծոյտակից (322 թ.):

Երբ որ Հայոց թագաւոր Սրբարը Եղեսիս մայրաքաղաքումը ընդունեց և Հայաստանումը տարածեց քրիստոնէական հաւատը (33 թուականին Ք. Մ. յեայ), հայերը շատ պատերազմներ ունեցան Տրայեանոսի հետ (98 թ.), Խաղարաց հետ (204 թ.), Պարսից Շահ Շապուրի հետ (259 թ.): Իսկ Տրդատ թագաւորը հալածեց Խաղարներին Հայաստանից և Աղուանստանից (310 թ.):

Վահան Ամատունին ջարդեց Հայաստանի վրա յարձակուած հիւսիսային բարբարոս ազգերին Վաղարշապատի գաշտումը 351 թ. իսկ 451 թուականին կատարուեցաւ Արարատ սարի մօսումը աշխարհահռչակ մեծ պատերազմը Պարսից հետ, ուր թէպէտ հերոսական մահուամբ սպանուեցաւ Հայոց մեծ Սպարապետ Վարդան Մամիկոնեանը իրա 1036 զենակից ընկերներով, սակայն հայերը թոյլ չտուին Պարսից թագաւոր Յաղկերտին մացնել Հայաստանի մէջ կրակապաշտութիւն:

513 թուականին հայերը պատերազմեցան Սարբիրի յոնաց հետ: 622 մինչև 698 թ. անընդհատ մասնակից էին խաչակիր արշաւանքումը, որ Հերակլիոյսը սկսեց կրակապաշտ պարսիկների դէմ: 640 մինչև 646 թ. նրանք դէմ կանգնեցան Հայաստանի վրա յարձակուող Արաբացւոց: 647 թ. պատերազմեցան Կոստանդիիանոս Բ. կայսեր հետ: 685 թ. կրկին հալածեցին Խաղարներին: 690 թ. պատերազմեցան Յուստինիանոս Բ. կայսեր հետ: 743 թ. ջարդեցին Հայաստանի վրա յարձակուող Խոռվ Մուրվանին: 830 թ. պատերազմեցան Թէոփիլակտոս կայսեր հետ: 852 թ. պատերազմեցան Արաբացւոց հետ Գուին քաղաքը պաշտպանելով: 909 թ. պաշտպանեցին Հայաստանի սահմանը Արաբացւոց յարձակմունքներից: 1068 թ. պատերազմեցան Սէլջուկ Տաճկաց հետ: 1170 թ. պատերազմեցան այլազգեադ հետ, որք այրեցին 10 հազար հատ հայերէն ձեռագիր գրեանք Բաղարերդումը: 1484 մինչև 1212 թ. պատերազմեցան Վրաստանի հետ:

Ուուրինեան ցեղի թագաւորութեան վերջին շրջանումը երեելի հանդիսացան իրանց քաջութեամբ պարսից դէմ պատերազմներումը Ախալցխոց Աթարէգները Սարգիս Զակել և Սարգիս Բ. 1285—1306 թ. իսկ 1370 մինչև 1375 թուականը թէպէտ նրանք շարունակ հինգ տարի մղեցին արիւնահեղ պատե-

բազմ երեք կողմից միասին յարձակուած արաբացի,
տաճիկ և պարսիկ ազգաց հետ, սահայն չկարողացա-
ցան կոտրել այդքան մեծ զօրութիւնքը: Թաղվեց
թագաւոր Լիւդվիկոս, որի քուեր աղջկայ հետ ա-
մուսնացած էր Հայոց վերջին թագաւոր Լէն Զ,
միջոց չգուաւ հասցելու նրան խօստացած օդնափառ
գորքը, և այդ պատճառաւ Հայոց թագաւորութիւնը
Կիլիկիումը վէր ընկաւ 1375 թուականին
և Լէն Զ փախաւ Ֆրանսիա, մեռաւ Փարէզումը
1383 թ. և թաղեցաւ Ցելեստինաց վանքումը 1793
թ. նրա դագաղը տեղափոխուեցաւ Նապոլէոն Ա կայ-
սեր հրամանաւ և զրած է այժմ Պարիժի մօղելու
մումը: Նրա մարմարնեայ քամբարտնի վրայ փորա-
գրած է Անսա Հանդիւհազարշեալ մարմին Լէնին Զ,
արքայի հայոց: Ա մարմարը մաս է 8001 թիւ
Հայոց թագաւորութիւնը վէր ընկաւ և թէ
Հայոց ազգի քաջութեան պակասութիւնից, այլ այն
պատճառաւ, որ նրա վրա միւնոյն ժամանակումը
միասին յարձակուեցան երեք ազգեր, քառապատիկ
աւելի զօրքերով: Այս մաս է 11
թիւ Յակաւորսթիւնը կորցնելուց յետոյ հայերը
ցրուեցան առևն աեղ և բնակութիւն հաստատելով
զանազան Երկրներումը, միշտ և ամեն ուեղ գերա-
զանցու ել և ճշմարիտ հաւաարիմ հպատակու-
թեամբ պատերազմելով թշնամեաց հետ այնատերու

թեանց, որոց գայսոնի նելքց գտել են իրանց հա-
մար նոր հայրենիք: Նրանք միշտ և անխափու կա-
տարել են աւելացանական պատղեէրը առուք զկայ-
սերն Կայսեր և զԱստուծոյն Աստվածությունը
Զիօսելով այն հայերի մասին, որք բնակուած
են զանազան օտարակերութիւններումը, բաւական ենք
համարում ցոյց տալ այսակը միայն Ռուսաց Կայարու-
թեան յայսկայս Կովկասեան կողմումը լրնակուած
հայերի գործքերը:
Սկսած 1387 մինչև 1550 թուականը Հայոց
ահագին խումբերը յառաջնթաց էին այս կողմի
քրիստոնէից բոլոր պատերազմներումը Թամերլանի,
Ուգուն Հասան Բանին Թուրքմէնից, Սէֆի Խամայէլ
խանի և նահ Թախմինի դէմի Վրաստանի և բոլոր
յայսկայս Կովկասեան կողմերը պաշտպանելոց համար:
Յետոյ նրանք գործակից էին ռուսաց զօրաց բոլոր
արշաւանքներումը Նախալեան մայրաքաղաք Թարքին
քանդելոյ ժամանակը 1595 թ. և պարսից նահ
Արտա Մեծի դէմ պատերազմներումը Կախէթիոյ ա-
ւերման ժամանակը 1616 թ.
Միւնոյն միջոցումը Կարաբաղու հայերը գլխո-
վին կազմելով ահագին զօրախումը տիրապետող
Մելիքների առաջնորդութեամբ, անդադար սպառա-
զինվում էին պարսից և ուրիշ թշնամի ազգաց
յարձակմունքների դէմ և այդպէս պաշտպանեցին

իրանց անկախութիւնը 1375 թ. մինչեւ 1798
թուականը, և միայն այդ տակումը նրանք կազմելով
քսան հազար գերդաստանք, մոտին Ռուսաց Տէրուա-
թեան հպատակութիւն և վերաբնակուեցան Կով-
կասեան և յայսկոյս—Կովկասեան կողմերումը:

Եթէ Սահմանական Օтечествա Հրագրի խմբագրը չըր
կարգացած և չգիտելի այդ անցքերը, որք կատարուել
են անցեալ գարերումը, և այդ չգիտենալոյց պատ-
ճառաւն է, որ անուանում է հայերին աշխարհաւունը
ամենից առելի վախենու առջ, ապա ուրեմն մենք իրա-
ւունք ունինք յուսալոյց, թէ նրան յայտնի են գոնէ
ներկայ դարուս անցքերը, որոց մասին, կարծիք
չկայ, որ նա կարդացած պիտի լինի պարբերական
տպագրութեանց և պատերազմական ծանուցմանց
(բէլացիա) միջումը: Իսկ եթէ նա մոռացել է կար-
գացածները և լսածները, ապա ուրեմն մենք բառա-
կանանանք զարթեցնելով նորա յիշողութեան մի-
ջումը միայն էն խոջոր անցքերը որք կատարուե-
ցան Կովկասումը և յայսկոյս Կովկասեան կողմումը ժթ
դարու սկզբից, Վրաստանու երկրի Ռուսաստանի հետ
միանալու օրից, ուր հայերը մեծագումար զօրախմբեր
կազմելով գարձակից են ուսաց պատերազմներումը
պարսից տաճկաց և լիռնականաց դէմ, և նրանցից
շատերը գերազանցուեցան օրինակիլի տղամարդու-
թեամբ, քաջութեամբ, անմիշերութեամբ և անձ-

նազըհութեամբ, ստացան մեծամեծ պարգևներ և
հասին ծայրագոյն զինուորական աստիճանների:
Հայոց արքեպիսկոպոս (յետոյ Կաթուղիկոս)
Ներսէսը, 1804 թուականին, Ելիսաւետոպոլու թիրգի
պաշարման ժամանակը, անձամբ առաջնորդելով իրա-
աշխատաւթեամբ հաւաքած հայոց զօրախմբին, օգ-
նեց ուսաց զէնքի և յաղթանակի յառաջադիմու-
թեանը:

Գեներալմայօր իշխան Մակաթեանը (Դարա-
բաղու տիրապետող մելիքներից մէկը) 1820 թ. բո-
լորովին ջարդեց Ղաղեղումուխի Սուրբայ խանին,
իսկ 1826 թ. անցկացաւ Երասխ գետը և ցրուեց
պարսիկներին:

Պարսից պատերազմի ժամանակը նոյն Արքե-
պիսկոպոս Ներսէսը, որ Նփրեմ կաթուղիկոսի հրա-
ժարման պատճառաւ կառավարում էր նրա հայ-
րապետական աթոռը, մեծ զօրախումբ հաւաքեց
հայերից, և անձամբ առաջնորդելով, ձիոյ վրա նըս-
տած, խաջը ձեռին բռնած, օգնեց Երեանու թիրգի
առմանը, ամեն տեղ ընթացակից էր գեներալ Կրա-
սովսկոյ հրամանի ներքայ գանուած ուսաց զօրքե-
րին, և իրա օրինակով ոգեսորում էր թէ ուսերին
և թէ հայերին 1827 թռաւկանին: Տէսէք, թէ ի՞նչ
է զրումնորա մասին նոյն Գլինկայ պատմաբանը:

Երես 253. «Ճամփեռութն դարու սկզբումը

(1709թ.) Հայերը զբումէին Պետրոս առաջին թաշ գաւորին՝ Զօրոժողավ Հայութ՝ և Ենց առևտու ունչի իլ իտիւ նենք։ 1827 թօւականին Հայերը կատարեցին իրանց խօստմունքը։ Հայոց Արքեպիսկոպոս Ներսէսը առաջինը շատավեցաց ուռւաց զօրքի բանակը և իրա հետքերեց նրանց համար իրա կիանքը, իրա գործակցութիւնը և իրա ալեւորեալ փորձուածութիւնը։

«Դեռ ևս Բէզարդալեան բարձրաւանդակները ծածկած էին սպիտակափայլ ձիւներով, երբ որ ուռւաց զօրագլուխ Գեներալ Աղիւտանոս Բէնիէնդորֆ երկրորդը, իրա յուպալի ուղեկից Ներսիսի հետ միասին, յաղթելով բնութեան ճեռքով կառուցած բոլոր գժուարութեանց, արագընթաց սլացմամբ իջաւ Աւրանեան նահանգի Լայնաստրած Հովիտը։ Թշնամոյ երկրի անհապատ միջնավայրումը յանկարծ նշանաւցաւ ուռւաց զօրքի աչքի առաջեւը էջմիածնայ վանքը իրա ահազին գմբեթներով հոյակապ բարձրացած պայծառ աղբիւրների սպիերումը։ Տարածուեցաւ զանագակների ձայնը, գուրու եկաւ հանդիսաւոր կերպիւ զգեստաւորեալ Հոգեւորականութիւնը էջմիածնի և ընդունեց ինչպէս ուռւաց զօրախումբը, Էնպէս էլ իրա մեծահռչակ հովուապետ Ներսիսին։

Երես 256. «Աչ թէ թնդանուզների որատմունքը, այլ Հայոց հոգւոյ զօրծակցութիւնը պատրաստեց Նրեանու բերդի անկումբ։ Այդ բերդը առնելից յե-

տոյ կարգուեցաւ ժամանակաւոր կառավարութիւն Գեներալ Կրասովսկուոյ և Ներսէս Արքեպիսկոպոսի հումահաւասար իշխանութեան ներքյա Ասած է արդէն, որ Հայրենեաց մօտակայ ազատութեան յօյն էր միայն, որ Տերունեցն ոգեսորում էր նոր կեանաքով։ Նրիտասարդի եռանդով համբերութեամբ տանում էր նա ուռւաց զօրքի հետ բոլոր արշաւանքների նեղութիւնները, վճռողական և ճշնաժամի գժուարասար հանգամանքներումը չէր խնայում իրա անձը, և ուրախութեամբ պատրաստ էր զոհել իրա կեանքը իրա եղբարց ազատութեան համար պարսից գերութիւնից։ Թագաւոր կայսր Նիկողայոս Առաջինը շնորհեց նրան Աղկբանդրի Նեվսկուոյ ասպետական շքանշանները իւր ԲԱՐՁՐԱԳՈՅՆ բեսկրիպտով, ուր գրումէ այսպէս՝ «Մրբազն ներսէս, արքեպիսկոպոս Հայոց։ Ի վաղ ժամանակաց հետէ և շատ դէպքերումը Դուք ցոյց էք տուել Զեր մեծ մութիւնը դէպի Առւասատոն և մանաւանդ ներկայ պատերազմումը պարսից հետօն։»

Նրա աշխատակից Արքեպիսկոպոս Դրիգոր Մանուչարեանը Գեներալ Երմոլովի յանձնարարութեամբ, հաւաքեց զօրախումբ 2000 Հայերից բազկացած, և անձամբ առաջնորդելով, օգնեց Ելիսաւետոպոլու առմանը, հնազանդեցրուց Շամշադինյա գաւառումը ապստամբուած մահմեդականներին 1826 թ. և այն-

քան ժամանակ դէմ կանգնեցաւ պարսից յարձակամանցը, մինչև որ հասին ռուսաց զօրքը և քշեցին նրանց Ռուսաստանի տահմանից:

Միւս աշխատակիցը Ներսիսի, Պօղոս քահանայ, որ աւանձին խումբ էր հաւաքել հայերից, Ելիսաւետոպօլս և Երևանու բերդերի առմանց ժամանակը, Ներս էր յարձակվում թշնամեաց ամենաթանձը շարքերի մէջ և արսափելի կոտորածք էր անում: Նրան կոչում էին Տոլստի այն պատճառաւ, որ նա կոռորում էր թշնամիններին մզրախով:

Գեներալ-Մայեօր իշխան Ասիլ Յովսեփիսեան Բեհրուդեանցը հինգ հարիւր բերդապահ զինուորներով դէմ կանգնեցաւ 18 հազարանոց զօրախմբին տաճկաց, որք յարձակվում էին Ախալցխոյ բերդի վրա 1829 թ. և այնքան ժամանակ պահպանեց բերդը, մինչև որ հասան ռուսաց զօրքերը:

Որուս ազգից ումը յայտնի չեն սիրագործութիւնքը Գեներալ-Ադիւտանտ իշխան Մովսիսի Զաքարեան Երկայնաբազուկ-Արդութեանց, որ ջարդեց և ցրուեց Նամիլ զօրքերին Ղազի Դումուխի և Քիւրինի խանութիւններումը 1842 թ., ջարդեց և ցրուեց Քիւրիս Մահոմետ զօրքերին Սալթայի կամուրջի մօտ Հարաւային Դաղստանումը, դէմ կանգնեցաւ լեռնականաց, որք յարձակուեցան Ղազիզումուխի վրա 1847 թ., իրա ընտիր զօրախմբով օգնեց Գեր-

զերիլ առմանը և ցրուեց Նամիլի զօրքերը Միաբին ջու մօտ 1848 թուականին:

Ումը յայտնի չէ, որ բազմաթիւ յաղթութիւններից յետոյ, որք կատարուեցան լեռնականների պատերազմներումը, Դաղստանու զօրախումբը, անձնական առաջնորդութեամբ Գեներալ-Ադիւտանտ իշխան Արդութեանի, Զարդեց և քշեց Թարասարանից Հաջի Մուրադի մեծազօր բանակը 1851 թուականին: Ումը յայտնի չէ, որ երբ Դաղստանու զօրախումբը անց էր կենում Թուրքիդաղի բարձրութիւնից դէպի Լեզգիստանու լեռնաշարքը, և երբ անց էր կենում Հինգ ամենաբարձր յաւիտենական ձնով ծածկած լերանց վրայօք, իշխան Արդութեանը ամեն տեղ ջարդում էր լեռնականաց զօրաժողովները: Ումը յայտնի չէ, որ իշխան Արդութեանը ազատեց Միսիլդիզերի բերդը, և այդ պատերազմումը իսպառ ջարդուած Նամիլը մազապուրծ ազատուեցաւ փախչելով Զուրմուտի միջովը դէպի Իրիք 1854 թուականին:

Մենք չենք կարծում, որ Ծահե Օтечествա լրագրի խմբագիրը երբէք լսած չը լինի, թէ լեզգիքը և լեռնականքը իրանց երեխերանցը վախւցնում և լուցնում էին Արդութեանի անունով:

Կովկասեան զօրաց պատմութեան միջումը գեղեցկաշար կերպիւ նկարագրած են սիրագործու-

թիւնքը՝ Գեներալ-Մայիսը կազմարեանի Դադստանումը զանազան ժամանակներումը. Պոլկովնիկ (յետոյ Գեներալ-Մայիսը) Առղջանեանի զանազան պատերազմներումը Հաջի Մուրադի դէմ 1852 թ., Օգուրզէթ գիւղի վրա յարձակուած տաճիկների դէմ, որոց նաբողորովին ջարդեց և քանդեց նրանց առւլները. Դիգոյումը. Պոլկովնիկ (այժմ Գեներալ-Ազիւտանտ Լօրիս-Մէլքեռնի). Պոլկովնիկ (այժմ Գեներալ օտ Խնֆանտերի) իշխանազն Խսահակ Թումանեանի, և այլոց, շատ պատերազմներումը լեռնականաց, պարսից և տաճ կաց դէմ:

Վերջապէս, անհաւատալի է, որ ուռու ազգից օքմին լսած չընի այն աշխարհահռչակ յաղթութեանց մասինն, որ կատարեց Թուրքաստանի աահմանապրւխումը ներգործող բանակի հրամանատու Գեներալ-Լեյտենանտ կնեազ Վասիլ Յեվսեվիսոն Բէհրուդեանը, որ 16 հազար զինուորականներով ջարդեց տաճ կաց 40 հազարից զօրախումը Բաշ-Քաջըքլեալի մօտումը 1853 թ. և Քիւրիւք-դարի մօառումը 1854 թուականին: Բոլոր աշխարհին յայտնի է, որ Թագաւոր Կայսրը, երբ որ ստայաւ վերջին յաղթութեան աւետարեր համբաւը, առաց՝ Շիմ Բէհրուդեանը անօրինակ յաղթութիւն արեց, վասնորոյ և և անօրինակ կը վարձատորեմ նրանու—և իսկոյն ուղարկեց թանկագին ակներով զարդարած շքանշան-

ները Սրբոյն Անդրէի նախակոչի, չը նայելով, որ աստիճանաւ էր Գեներալ-Լէյտենանտ: Թիվանուարաց Թիվող ցոյց տայ մեղ պ, Խմբագիլը, թիւ ուսւաց Գեներալ-Լէյտենաններից ո՞ն է աւացել երբէք այդպիսի Կայսերական առանձնաշնորհ ողորմութիւն: :

Կարծիք չկայ և ոչ ոք չէ կարող վիճաբանել, թէ այդ բոլոր պատերազմներումը և բոլոր յաղթութիւններումը գործակից են եղել բազմաթիւ ձիաւոր և հետեւակ միլիցիայք բոլոր յայսկոյս Կովկասեան հայերից, և թէ ուսւաց կանոնաւոր զօրքերի միջումը եղել են հազարաւոր հայազգի իւնկերներ և հարիւրաւոր օբեր և շտաբ օՓիցերներ: Ամենքին յայտնի է, որ 1855 թուականին, երբ որ ուսւաց բերդապահ զօրքերը գուրս գնացին Թիֆլիսից դէպի Թուրքաստանի սահմանը, այն ժամանակը Կառավարչութեան առաջին ձայն տալովը կազմուեցաւ ահագին զօրաժողով բոլոր Թիֆլիսաբնակ ազգերից Գեներալ-Մայօր կնեազ Մուխբանսկուոյ հրամանատարութեան ներքոյ: Աօմնից վեց մասը այդ զօրաժողովի բաղկացած էր Թիֆլիսաբնակ ամենայն կարգի և աստիճանի հայերից, որք իրանց ծափքովը զինաւորուած և իրանց սեփական ձիոց վրա հեծած դուրս գնացին Գիղուրայ կոչուած արուարձանը տեսական գննողութեան ենթարկուելոյ համար, և այն

օրից սկսած մինչև ռուռաց բերդապահ զօրաց վերադառնալու օրը, Կառավարութեան տնօրէնութեամբ, պահպանում էին բոլոր արքունի տեղերքը, պահում էին բոլոր պահպանութիւնքը (կարառուլ) և գիշերային հսկողութիւնքը և զինուորական գիշերապահ շրջագայութիւնքը (պատրուլ):

Բոլոր վերոգրեալները կատարեցին հայերը Ռուսաստանի այն նեղացած ճգնաժամերումը, երբ որ Ընե Օтечествա լրագրի խմբագիրը և նրա նման անձինք, որք անուանում են հայերին աշխարհումը աւելի վարչութեան, նստած էին իրանց անկիւններումը կամ քնած էին փեշի վրա: Թող գան նրանք այս կողմը և տեսնեն, թէ որքան հայերի կուրծքերը զարդարած են աշնութեան Հայութ ստացած մեղաններով, զինուորական շքանշանի խաչերով և զանազան վարդանե ժապաւէններով յատակացրած շքանշաններով, և թէ որքան հայեր երթեւելում պատերազմներումը ստացած անքուժելի վերքերի հետեւանքով:

Կարելի է, որ Ընե Օтечествա լրագրի պ. խմբագիրը կը կամենայ արդարացնել իրա գլուխը այնու, թէ վարչութեան անուանելէ նա միայն Թուրքաստանու հայերին: Բայց նա այդտեղ էլ կը սխալուի խղճալի կերպիւ, ըստ որում Թուրքաստանու հայերի քաջութիւնը և անվիշերատութիւնը

շատ անգամ երևացել է ԶԵՂԹՈՒՆԳԵՐ միջումը, որք զէնքը ձեռքումը բռնած տոքի էին կանգնում և մինչև այսօր ԷԼ ԴԵՄ էն առնում տեղական տաճկական զօրաց և պահպանում էն իրանց անմատչելութիւնը, հատուցանելով միայն հարկերը տաճկական իշխանութեան: Իսկ որ ինչ վերաբերի միւս հայերին, որք բնակվում էն Եւրոպական և Ասիական Տաճկաստանի զանազան գաւառներումը, նրանք, ողորմելի տառապակիրները, զրկուած են բոլորովին իրանց քաջութիւնը և տղամարդութիւնը ցոյց տալոյ ամենատեսակ միջոցներից նախ՝ այն պատճառաւ, որ նրանցից իւլած են գէնքերը և թուրքի օրէնքով զէնք կրելը իրաւունք չ'ունին, և երկրորդ՝ այն պատճառաւ, որ իրանց բնակութեան տեղերումը շրջապատած են զենակիր թուրքերով: Եթէ փոքր ինչ շարժին կամ տրտնջան, նոյն բոպէին իրանց դրաձի թուրքերն էլ բաւական են, որ կոտորեն նրանց ոշխարների պէս: Ուրեմն ի՞նչպէս կարող են նոքա, առանց զէնքի, ցոյց տասլ իրանց քաջութիւնը զինակիր թշնամեաց բազմութեան միջումը, որ պ. խմբագիրը չըկոչէ նրանց վախէռք: Սորանից ակներեւ տեսնում ենք, որ պ. Խըմբագիրը պարսաւելով Թուրքիոյ հայերին վարչութեան համար, արտայայտել է, թէ բոլորովին չգիտէ ոչ նրանց բնաւորութիւնը, ոչ յատկութիւնները, ոչ նրանց պատմութիւնը և ոչ նրանց քաղաքական

կեանքի պայմանները, և այդպիսի աններելի տղիւ
տութեան միջումը խռուած, առանց մասածելոյ և
հասկանալոյ անուանել է նրանց վախու և արմեաշխա,
թոյլ աալով իրա անձին զործ ածել այդպիսի ռամբ
կական խօսքը տպագրութեան միջումը:

Սակայն մենք տեսնում ենք, որ անուանելով
հայերին աշխարհումը ամենից առելի երկար աղք, պ.
խմբագիրը խօսւմ է ոչ թէ միայն թուրքիաբնակ,
այլ ընդհանրապէս բոլոր հայոց ազգի վրա, վասնորոյ
բաւական համարելով վերոգրեալ փաստերը, մենք
հայու բարե ենք ասում նրան և երեսներս դարձնելով
նրանից, հարկաւոր ենք համարում բարձրաձայն գու-
շել հաշուլու իմբագիր:

Արանից յետոյ մասածելով, թէ զուցէ կը գրա-
նուին այնպիսի անձննք, որք ըս նայելով վերոգրեալ
պատմաբանական անվիճելի ապացոյցների վրա, կը
կասկածեն և կ'երկրային հայոց ազգի քաջութեան
և ուրիշ պանծալի յատկութեանց և մեծագործու-
թեանց մասին, ըստ որում կան այնպիսի պարոնայք,
որք արեգական վրա էլ սետ բներ են տեսնում. վասնորոյ
մենք, այդպիսի պարոններին պատասխանելոյ և նրանց
կարծիքները փարատելոյ համար, յառաջ ենք բե-
րում այստեղ, իրրե ջօշափելի ապացոյց, ելեք հառ
անգին կառապեռ-շնչ, որք շնորհած են հայոց ազգին և

նրա արժանաւոր ներկայացնալներին: Այս ասիկ այդ
փաստաթղթերը:

1. Ասուուծոյ Աղորմութեամբ
ՄԵՔ ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՌԱԶԻՆ
ԿԱՅԱՐ ԵՒ ԽԲՆԱԿՈԼ համայն Ռուսիոյ

և այլոց, և այլոց, և այլոց:

Բոլոր սիրելի և հաւատարիմ հպատակ Հայոց
Ազգին Մերում, որք բնտկուած են Վրաստանումը,
և բոլոր կոչմանց, որք բաղկացնում են այդ ազգը,
Մերս Կայսերական Աղորմութիւն:

Ճշմարիտ բաւականութեամբ սրտի տեսանք Մենք
վրաստանի գլխաւոր Հրամանատուի յայտարարու-
թիւնից Մեր սրտի համար ուրախութիթ նոր վկա-
յութիւն այն զգացմանց հաւատարիմ—հպատակա-
կան երախտագիտութեան, որովք Վրաստանումը
բնակուած հայոց ազգի բոլոր կոչմունքը միշտ լքցուած
են Ըլել դէպի Բարձր հովանաւորութիւնը և դէպի
Մեր հայրական հօգատարութիւնը նրանց և բոլոր
այնտեղի ժողովութեան բարութեան համար: Նոքա
ապացուցել են այդ զգացմունքը շատ անգամ կրկնուած
անսասանելի հաւատարմութեան փորձերումը ամեն
զիպուածքումը: Նոքա գերազանցուել են օրինակելի
հաստատութեամբ և անձնանուելութեամբ, երբ թեւ-
թեամտութիւնը և անբարեմտութիւնը զուր աշխա-
տում էին սասանեցնել Վրաստանումը Մեր ձեռքով

Հաստատած անդորրութիւնը, և աղմկալից հանգաւ
մանքների միջումը մնացել են հաստատուն և անշարժ
իրանց ջերմեռանդութեան միջումը դէպի Մեղ և
Մեր Գահը, զոհելով իրանց կայքը և բոլոր միջոց-
ները և նոյն իսկ կեանքը Մեր ծառայութեան օգտի
և ընդհանուրի բարութեան հսմար:

Այդպիսի ջերմեռանդութիւնը բոլոր հայոց ազ-
գի Վրաստանումը և բոլոր կոչմանց, որք կազմում
են այդ ազգը, նրանց ցոյց տուած ծառայութիւնքը,
արժանաւորութիւնքը և մեծագործութիւնքը դնում
են Մեղ վրա ուրախառիթ պարտաւորութիւն վկայել
բովանդակ աշխարհքի առաջնը Մեր իրաւացի ե-
րախտագիտութիւնը և բարեհաճութիւնը: Պահպա-
նուի այդ վկայութիւնը նրանց պատւոյ և փառքի
համար սելնդրց յիշողութեան միջումը: Մնամք առ
ամենեսին նոսա Մերով կայսերական Ոլորսութեամբ
բարեհած: Տուաւ մեր գլխաւոր կայարանումը Տեպից
քաղաքումը, որ է բոհեմիումը, 15 Սեպտեմբերի
յամի ՚ի ծննդենէ Քրիստոսի 1813 և թագաւորու-
թեան Մերոյ ՚ի տասն և երեք: Իսկականի վրա
ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵՇՈՒԹԵԱՆ
ձեռքով գրած է ԱՂԵՔՍԱՆԴՐ: Վաւերացոյց
Արքունի Կանցլեր Կոմս Ռումենացով:

2.) Աստուծոյ Ողբամութեամբ
ՄԵՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՌԱԶԻՆ
ԿԱՅՍԵՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ համայն Ռուսիոյ
և այլոց, և այլոց, և այլոց:
Արբազան ներախսի, Վիճակաւոր Արքեպիսկո-
պոսի ամենայն հայոց, բնակելոց ՚ի Վրաստան:
Պարսից կողմանէ խաղաղութեան եղծանելը և
նրանց անակնունելի յարձակմունքը Մեր նահանգ-
ների վրա միջոց տուին հայոց ազգին, որ բնակուած
է Վրաստանումը, փորձով արտայայտել իրանց ջեր-
մեռանդութիւնը և դէպի Մեղ անկեղծ անձնանուէ-
րութիւնը: Այդ հանգամանքներումը հայոց ազգը
ապացուցեց, թէ գիտէ գնահատել Կառավարութեան
նրա համար ունեցած բարերար աշխատութիւնքը, և
թէ պարզ տեմնում է իրա ներկայ վիճակի գերա-
զանցութիւնը օտար երկրներումը ցրուած այնքան
բազմաթիւ հաւատակիցների վիճակի համեմատու-
թեամբ: Յանձնում ենք Ձեղ յայնել բոլոր հայերին,
որք գտանքում են Ձեր հոգեւորական տեսչութեան
ներքոյ, Մեր կատարեալ բարեհաճութիւնը և հա-
ւասար կացուցանել նրանց Մերս կայսերական իրա-
քով, թէ շարունակելու են նրանց վրա Մեր ա-
ռանձին ողորմութիւնքը: Քանի որ անխախտ կ'մնայ
հաւատարմութիւնը Ձեր ազգի, որ գտել է յուսակի
ապաստանարան Ռուսիոյ գահի հովանառութեան

տակումը, Մենք պարտաւորութիւն կը համարիմք Մեզ անքուն հոգալ նրա երջանկութեան և անդոր- րութեան համար:

Չեր հոգեղոր հոտի գովանի վարքը վերսրբերե- լով և Ձեր հոգուապետական տրդորանաց ներգոր- ծութեանը, Մենք յայտնում ենք Ձեզ Մեր Արքայա- կան երախոագիտութիւնը և մնամք Մերով Կայսե- րական առ Ձեզ Ողբածութեամբ բարեհաճ: Ս. Պե- տերուրդ, յշ Փետրվարի 1827 ամի, թագաւորու- թեան Մերայ երկրորդ ամի: Խակականի վրա ՆՈՐԻՆ
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵՇՈՒԹԵԱՆ ձեռքով
պատ է ՆԻԿՈՂԱՅՈՒ:

3.) Գերապահիւ հայր Գլիգոր Ալքեպիսկո-
պոս հայոց Ողորմած Տէր:

Ըստ Հառաստութեան նախագահին՝ ի վերայ հոգեօրականութեան հայոց Ձերդ Արքայութեան գերագունց ջերմեւանդութեան մասին դէմի ծառա- յութիւնը և մշտական պատրաստութիւնը օգտաւէտ լինելոյ նմին, ես հրաւիրեցի զձեզ գնալ նամշաղնոյ գաւառը, ուր բնակիչքը խռովութեան յուղմանց մէջ էին գտանվում պարսից կողմանէ մեր դէմ յա- րուցած վնասաբեր համոզմունքից, և մեծ մասը

տաճիկ աւագամեծարների ապստամբուեցան մեղանից, և զիտելով, որ Ձերդ Արքայնութիւն գրաւած ունիք բոլոր ժողովրդեան յարգանքը և մտերմութիւնը, ես խնդրեցի Ձեզանից պահել ժողովուրու- թեան միջումը, որպէս զի նոքա չը հետեւին միա- մտաբար ուրիշների ապստամբութեանը: Ի կատարեալ բաւականութիւն իմ Դուք լիովին հանդիսացաք ար- ժանի այդ ընտրութեանը և Ձեր հոգուապետի Ձեր մասին ունեցած բարեյցյս մտերմութեանը, ենթար- կելով Ձեր անձը մեծամեծ վտանգների: Դուք փոք- րաթիւ հայրց խմբով թոյլ լառուիք խռովարաներին տանել հայոց գերգաստունքը սահմանից դուրս, և ա- մենայն հնարքով օգնելով գլխաւոր Պրիստավին, կնեազ Թարլաննեանին, անմոռանալի ծառայութիւն ցոյց տուիք Ռուսիոյ Գահին և լիովին արժանացաք մեր երախտագիտութեանը:

Ճամանելով ոռւսաց գորախմբի հետ 'ի Հասան- Սու, ես խնքս վերսասու եղայ և ստովեցի Ձեր մեծագործութիւնքը, վասնորոյ և աննահանջելի պարտաւորութիւն և մ համարում ինձ համար յայտ- նել Ձերդ Արքայնութեան 'ի դիմաց Կառավարու- թեան չնորհակալութիւն և մնամ ուրախառիթ յուսով, թէ Դուք առ յապայն ևս չէք դանդաղել միշտ պատրաստ գտանվելոյ Թագաւոր Կայսեր ծա- ռայութեան օգտի համար:

Ճշմարիտ իմով առ Ձեզ յարգանօք և անձնաւ
նուերութեամբ, ունիմ պատիւ լինելոյ,
Ձերդ Սրբազնութեան, զայոց
№ 410 Ողորմած Տեառն,
1 Հոկտեմբերի 1826 ամի ամենախոնարհ ծառայ
Բանակ 'ի Հասան-Սու։ Ալէքսէյ Երմոլով։
Նորին Սրբազնութեան, Գրիգորի
Արքեպիսկոպոսի Մանուչարեանց։

Հրաւիրում ենք Հայոց ազգի անարգողներին
վերոգրեալ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ըեսկրիպտոներն կարդալոյ
ժամանակը առանձին ուշադրութիւն դարձնել նրանց
միջումը գեղեցկաշար արտայայտութեանց վրա Հայոց
ազգի յատկութեանց և արժանաւորութեանց մասին,
որք վկայած են բոլոր աշխարհքի առաջեր, և յե-
տոյ Հարցնել՝ թէ արդեօք ունի՞ ո՞ւ և իցէ իրաւունք
կոչելոյ Հայերին արմեռշիռ և աւելից աւելի սպիտու աղդ։

Յօյս ունիմք, որ պ. Խմբագիր Ուսպենսկին կը
շատպէ ներողութիւն խնդրել Հայերից իրա լրագրի
մերձաւորագոյն թուահամարումը. իսկ եթէ նա չէ
կատարիլ մեր յոյսը, այն ժամանակը մենք անար-
գանաց մատնելով նրա խօսքերը, կը սպասենք ուսում-
նասիրաց կողմանէ անաշառ դատողութեան և դա-
տակնքոյ։

Մ. Պ.

ԳՐԲԻՄ ՆՊԱՏԱԿԸ

Ակաած 1873 ամից ոռւաց լրագրերումը հրա-
տարակուեցան զանազան պարսաւանք հայոց կրօնի
և ազգային յատկութեանց վրա։ Այդ պարսաւանք-
ներից շատերի դէմ Հայերը բոլորովին պատասխան
չը տուին. իսկ մէկ քանիսի դէմ թէպէտ և դուրս
եկան հայ լրագրերի միջումը մէկ քանի համառօտ
և պայմանը գրում պատասխանիք, սակայն նրան-
ցից ոչ մէկն էլ չը հասաւ իրա նպատակին, բատ ո-
րում գրած էին Հայերէն, վասնորոյ ոչ պարսաւող-
ներն և ոչ նրանց խօսքերին հաւատացող ընթերցող-
ները չը կարողացան իմանալ թէ ի՞նչէ գրած նրանց
դէմ։ Ուստի և արտայայտած պայմանը մնացին
անպատուղ (գրպանումը սպառնացած բռունց), և
միայն այն օգուար բերին, որ գոնէ կարդացող Հա-
յերը իմացան, թէ ի՞նչ են գրում նրանց մասին
ուսւ լրագրերումը։

Յայտնի բան է, որ մեր խմբագրութիւնքը այդ-
պէս վարուելով յօյս ունէին, թէ մեր ուսումնական-
ների միջումը կը գտնուին այնպիսի անձինք, որք
յանձը կ'առնուն ուսուաց կամ ուրիշ եւրոպական լեզ-
ւով պատասխաննել պարսաւոլներին. բայց ցտելով
տեսանք, որ այդ յօյսն էլ մնաց անկատար, և Հա-
յերը բաւական համարեցին միայն լուսվեամբ ար-
տայայտել իրանց ստուն արհամարհանքը։

Սակայն մտածող անձինք Հարցնում են, թէ
ի՞նչ օգուտ կարող է բերել կամ բերել է մինչև
այսօր այդ լրութիւնը։ Ոչ ապաքէն պարսաւողները

չեն կարող հասկանալ այդ լոռւթիւնից իրանց սխալ-
մունքը: Ոչ ապաքէն նրանք կարող են նա ևս հա-
մոզուիլ թէ երեկի ճշմարիտ է իրանց գրածը, որ
ոչ ոք չէ հերքում, ըստ որում լոռւթիւնը նշան է
համաձայնութեան:

Հենց այդ մոտաժմունքից սովորուելով ես յանձն
առի տպագրել Կաեկազ (Կովկաս) լրագրումը վերո-
գրեալ երկու յօդուածքը ուստաց լեզուաւ, որոց
միջումը, ինչպէս տեսանք, փաստերով պացուցած
են պարսաւողների սիստմունքը:

Եատ առաջնակարգ հայագիր անձինք, որ կար-
դացին այդ յօդուածները ուստաց լրագրումը, մեծ
չնորհակալութիւն յայտնեցին ինձ բերանով, նամակ-
ներով և լրագրութեանց միջնորդութեամբ. իսկ այն
հայերը, որք չգիտեն ուստաց լեզուն, ինչդրեցին ինձ
թարգմանել նրանց համար, վասնորոյ և ես, կատա-
րելով նրանց ցանկութիւնը, տպագրեցի այս թարգ-
մանութիւնը:

Բայց առակ կայ ասած, Աէ Աէ ծաշեւը գործոն
նշան չէ: Ուրեմն հարկաւոր է, և ես յոյս ունիմ,
որ մեր ազգի ուսումնականքը լրացնելով իմ գլու-
թեանց թերի տեղելքը ուստա կամ որեիցէ եւրոպա-
կան լեզուաւ գրած աշխատասիրութեամբ, գուրս կը
կանչեն դորանով բանագէտ անձանց արձագանքը և
կը ստիպեն պարսաւողներին՝ կամ պատասխանել և
կամ հրապարակու խոստովանիլ իրանց սխալմունքը

Իսկ ինձ մնում է միայն ասել «Ո՞չ չարաշ է»,
գործեցի. Առ և գործէ առաւել լուր, ու իտրոջ է»:
Միքայէլ Պատկանեանց:

ՀՀ Ազգային գրադարան



NL0349374

